Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Վ.Վ.Մայակովսկու անվան հ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզկուլտուրա» (18 դասաժամ), «Ռուսաց լեզու» (28 դասաժամ),, «Աշխարհագրություն» (8 դասաժամ),և ռուսերենով ուսուցմամբ տարրական դասարանների (դասվարի) (15 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

1.Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1) մեկ լուսանկար 3X4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
-անձը հաստատող փաստաթուղթ
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (Ձև 5)
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում ը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Երևանի Վ.Վ.Մայակովսկու անվան հ. 7 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչ 7:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 527 929 հեռախոսահամարով: